- զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով կենսաթոշակ և պարգևավճար նշանակելը (վերահաշվարկելը) և վճարելը:

Գործարկվում է աշխատանքային գրքույկների հաշվառումը և աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու համար էլեկտրոնային լուսապատճենների ստեղծումն ապահովող տեղեկատվական ենթահամակարգը: 2018 թվականին թվայնացվել է շուրջ 270000 աշխատանքային գրքույկ:

Պետական կենսաթոշակների և նպաստների վճարման գործընթացի արդյունավետությունը մեծացնելու, վարչարարությունը պարզեցնելու նպատակով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունմամբ պայմանավորված՝ մշակվել և օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել պետական կենսաթոշակները և նպաստները սոցիալական ապահովության (պարբերական բնույթի վճարումներ) կամ միանվագ դրամական վճարների (ոչ պարբերական բնույթի վճարումներ) հաշիվների միջոցով վճարելն ապահովող՝ ՀՀ կառավարության որոշման 11 նախագիծ: Դրանց վերջնական տարբերակները 2019 թվականին կդառնան կառավարության քննարկման առարկա:

Օրենսդրության մեջ կատարվել են փոփոխություններ, որոնք միտված են եղել՝

- այն ընտանիքների սոցիալական պաշտպանության մակարդակի բարձրացմանը, որոնք պատրաստվում են ունենալ 2-րդ երեխան (երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը երկրորդ երեխայի ծնվելու դեպքում սահմանվել է 150 000 դրամ՝ նախկինում սահմանված 50 000 դրամի փոխարեն,

- 3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների սոցիալական պաշտպանության մակարդակի բարձրացմանը (անկախ երեխայի 1 տարին լրացած լինելու հանգամանքից, ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձն իրավունք ստացավ տնօրինել ընտանեկան դրամագլուխը՝ ամսական 50 000 դրամի չափով՝ նախկինում սահմանված 25 000 դրամի փոխարեն, որը հնարավոր էր օգտագործել միայն երեխայի 1 տարին լրանալուց հետո):

ՀՀ ԱԺ հավանությանն արժանացած ՀՀ կառավարության ծրագրի հիմնական թիրախային նպատակադրումներից մեկը ծայրահեղ աղքատության հաղթահարումն է:

Սոցիալական պաշտպանություն Հաշմանդամներ և տարեցներ

Հաշմանդամության ոլորտի պետական քաղաքականությունն ու նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և սոցիալական ներառմանը:

2018թ. շարունակվել են հաշմանդամության բնագավառի օրենսդրությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների համապատասխանացնելուն ուղղված աշխատանքները:

Հաշմանդամության գնահատման համակարգում նոր մոդելի ներդրման նպատակով մշակվել և շրջանառության մեջ է դրվել կառավարության որոշման նախագծերի փաթեթ («Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը): Փաթեթում ներառված իրավական ակտերի նախագծերով կարգավորվում են հաշմանդամության գնահատմանն առնչվող դրույթները, դրանք հիմնված են Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (ԱՀԿ ՖՄԴ) մոտեցումների և սկզբունքների վրա: Ներկայումս փաթեթը վերանայվում է: Մասնավորապես, քննարկման փուլում է ոլորտում համակարգային (այդ թվում՝ կառուցվածքային և կադրային) փոփոխություններ կատարելու հարցը. նախատեսվում է ներկայիս բժշկասոցիալական փորձաքննության համակարգի փոխարեն ստեղծել անձի կարիքների գնահատման կենտրոններ, որի բազմամասնագիտական թիմը կիրականացնի անձի կարիքների բազմակողմանի գնահատում, ըստ այդմ կարիքների վերհանում առաջարկելով նրա կարիքին համարժեք ծառայությունները:

2018թ. իրականացվող պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամներին անվճար տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ և այլ վերականգնողական պարագաներ: 2018թ. լսողական սարքերը և հաշմանդամի սայլակները շահառուներին տրամադրվել են պետական հավաստագրերի հիման վրա: Ընդունվել է ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N1151-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1516-Ն որոշումը, որի համաձայն 2019 թվականից պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաները, վերականգնման աջակցող միջոցները հաշմանդամություն ունեցող և այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրվելու են հավաստագրերի միջոցով:

Պետական աջակցություն է ցուցաբերվել «Փրկություն», «Լիարժեք կյանք» ՀԿ-ներին և «Աուտիզմ ազգային հիմնադրամին»՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին և երիտասարդներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմում է 188 460, որից 8 193-ը՝ հաշմանդամություն ունեցող երեխա կարգավիճակով: Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 4 972 անձով: 2018թ. ընթացքում առաջին անգամ փորձաքննվել է 11 719 անձ (նախորդ տարվա համեմատ նվազել է 757-ով), վերափորձաքննվել է 36451 անձ (նախորդ տարվա համեմատ նվազել է 12 397-ով):

Տարեցների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է նպաստել խնամքի կարիք ունեցող տարեց մարդկանց կյանքի որակի բարձրացմանը:

2018թ. ընթացքում շարունակվել են տարեցների սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացումը, պետության կողմից որդեգրվել է տարեցների համար արժանապատիվ կենսապայմաններ ապահովելու և ըստ նրանց գնահատված անհատական կարիքների ծառայություններ մատուցելու քաղաքականություն:

2018թ. տարեցների հիմնահարցերի ոլորտում գերակա խնդիր է համարվել «Ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության այլընտրանքային ծառայությունների նոր մոդելների ներդրման համար նախադրյալների ստեղծումը» միջոցառումը, որի իրականացման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի մայիսի 18-ի N 20 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Ծերացման հետևանքների հաղթահարման ռազմավարությունը և ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագիրը»:

Ռազմավարության միջոցառումների ծրագրով 2018 թվականին նախատեսված միջոցառումների շրջանակում մշակվել է ակտիվ ծերացումն ապահովող այլընտրանքային ծառայությունների նոր մոդելների (ծրագրերի) նախագծեր, մասնավորապես՝ Սոցիալական օգնականի ծառայության ներդրում:

Տարեցների առողջ ապրելակերպի և ակտիվ ժամանցի ակումբ-ցերեկային կենտրոնի ստեղծում:

Տնային պայմաններում խնամքի տրամադրման ծառայության ներդրում՝ ըստ տարեցի գնահատված կարիքների:

Համայնքահեն շուրջօրյա խնամքի տան ստեղծում:

Տարեցի խնամքի կազմակերպումը խնամատար ընտանիքում:

2018 թվականի ընթացքում տարեցներին մատուցվող ծառայությունների որակը և արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև ՊՈԱԿ-ներին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորություն ընձեռելու նպատակով, նախարարությունը մշակել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթի օգտագործման կարգը սամանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 15.02.2018թ. N 163-Ն որոշումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունիսի 1-ի N 69-Ա/1 հրամանով սահմանվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության արդյունքում իրականացվող ծախսերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող միջոցներից տարանջատելու և հաշվետվությունների ներկայացման կարգը:

Քաղաքացիական հասարակության հետ աշխատանքները համակարգելու, ինչպես նաև նախարարության գործունեությունը առավել թափանցիկ ու վերահսկելի դարձնելու նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 18-ի N 112-Ա/1 հրամանով հաստատվել է նախարարության ենթակայության՝ երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնելու կարգը և հասարակական դիտորդական խմբի կազմը, որը ցանկացած ժամանակ կարող է այցելել և մշտադիտարկում իրականացնել խնամքի հաստատություններում, ինչը կնպաստի ծառայությունների որակի բարելավմանը և հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանության մակարդակի բարձրացմանը:

2018 թվականին շարունակվել է պետական աջակցություն ցուցաբերվել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը, «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին և «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամին տարեց և

հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև անօթևան անձանց խնամքի ծառայություններ մատուցելու համար:

Սկսած 2018 թվականից պետական ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել նաև «Ջերմիկ անկյուն» հիմնադրամին և «Խնամք» հասարակական կազմակերպությանը:

2018 թվականին շարունակվել է Քուվեյթի Պետության կառավարություն աջակցությամբ «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տարածքի բարեկարգումը:

Տարեցների ենթադրատում «Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

Տարեցներին շուրջօրյա խնամքի ծառայություններ

Միայնակ տարեցներին և հաշմանդամներին շուրջօրյա խնամքի ծառայություններ են մատուցում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող հինգ տուն-ինտերնատ՝ Երևանի N 1, Նորքի, Գյումրու, Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատները և «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնը: Տուն-ինտերնատներում խնամվող 1 210 կենսաթոշակառուները գտնվում են պետության լրիվ խնամքի ներքո:

Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում

Այս ծրագրով նախատեսված միայնակ տարեցներին տնային պայմաններում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ է մատուցում նախարարության համակարգում գործող «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը Երևան քաղաքում սպասարկում է 1 450 միայնակ տարեց ու հաշմանդամ կենսաթոշակառուի:

Հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանով ապահովում

Սույն միջոցառման իրավական հիմքը ՀՀ կառավարության 2015 թ.սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշումն է:

«Վետերան» օթևանը, որպես հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարան, նախատեսված է սպասարկելու 57 անձի:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ

«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնին կից հոգեկան առողջության ցերեկային կենտրոնում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություն են ստանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 20 անձ:

Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացնում է որոշակի բնակության վայր չունեցող անձանց ժամանակավոր կացարանի տրամադրման ծրագիր և այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից «Հանս Քրիստիան Քոֆոեդ» բարեգործական հիմնադրամին հատկացվում է ֆինանսական միջոցներ՝ 100 անօթևան անձի ժամանակավոր (մինչև 90 օր ժամանակով) կացարան տրամադրելու և սոցիալական տարբեր ծառայություններ մատուցելու համար:

ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում

Պետական աջակցություն է ցուցաբերվել «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ին հանրապետության 8 մարզերում 3 440 միայնակ տարեց ու հաշմանդամ կենսաթոշակառուի տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում սպասարկող աշխատողների աշխատավարձը փոխհատուցելու համար:

Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում

Պետական աջակցություն է ցուցաբերվել Վանաձորի տարեցների տանը, որտեղ խնամվել է 55 կենսաթոշակառու:

Մտավոր ու ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայությունների տրամադրում

Պետական աջակցություն է ցուցաբերվել «Ջերմիկ անկյուն» խմբային տանը, որտեղ շուրջօրյա խնամքի ծառայություններ են ստացել մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող 15 հաշմանդամ և ծնողագուրկ երիտասարդներ:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայությունների տրամադրում

Պետական աջակցություն է ցուցաբերվել Սպիտակի Խնամքի տանը, որը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի այլընտրանքային ծառայությունների տրամադրման նոր մոդել է և առաջինն է Հայաստանում: 2018 թվականին կազմակերպությունում խնամվել է 16 անձ:

Երեխաների հիմնահարցերի բնագավառ

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականությունը պայմանավորված է երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովմամբ և երեխայի պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով, ինչը ենթադրում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովում, այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացում, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում խնամվող երեխաների կյանքի որակի բարելավում և նրանց ինտեգրում հասարակություն:

Ոլորտում իրականացվում է այլընտրանքային ծառայությունների ընդլայնմանը և զարգացմանը ուղղված գործընթաց: Այս ուղղությամբ 2018թ. ընթացքում իրականացվել են մի շարք միջոցառումներ. մշակվել են հետևյալ իրավական ակտերը՝

ՀՀ կառավարության կողմից 2018թ. հուլիսի 4-ին հաստատվել է «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, գույք ամրացնելու, ամրացված ու ազատված գույքը որպես բնափրային օգնություն տրամադրելու, «Հայկական կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը գույք նվիրաբերելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 890-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 762-Ն որոշումը: Որոշման համաձայն վերակազմակերպման արդյունքում հաստատությունում շուրջօրյա խնամք ստացող երեխաները վերադարձել են կենսաբանական ընտանիքներ և միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ այդ ընտանիքներին իրենց գնահատված կարիքներին համապատասխան տրամադրվում է աջակցություն:

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, գույք ամրացնելու, ամրացված ու ազատված գույքը որպես բնափրային օգնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

Շահագրգիռ գերատեսչությունների կարծիքին են ներկայացվել «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի 890-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի 890-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, գույք ամրացնելու, ամրացված ու ազատված գույքը որպես բնափրային օգնություն անհատույց տրամադրելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 890-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը:

Մշակվել և ՀՀ օրենսդրության համապատասխան՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել որդեգրման և խնամատարության գործընթացները կարգավորող, ինչպես նաև Փոքր տների ստեղծման վերաբերյալ իրավական ակտերը: Մշակվել և սահմանված կարգով ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել նաև «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, գույք ամրացնելու, ամրացված ու ազատված գույքը որպես բնափրային օգնություն տրամադրելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

2018թ. ընթացքում որդեգրման գործընթացի մշտադիտարկման արդյունավետության բարձրացման, որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչների վերանայման, որդեգրված ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաների կյանքի և դաստիարակության նկատմամբ հետագա վերահսկողության ընթացակարգերի ներդրման նպատակով մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Որդեգրել ցանկացող անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, և որդեգրման ենթակա երեխաների հաշվառման, որդեգրել ցանկացող անձանց որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկությունների տրամադրման, որդեգրել ցանկացող անձանց և որդեգրման ենթակա երեխաների համադրման, որդեգրել ցանկացող անձանց կողմից երեխայի որդեգրման, օտարերկրյա պետությունից երեխա որդեգրելու համար որդեգրել ցանկացող անձանց հաշվառման, կենսապայմանների ուսումնասիրության մասին արձանագրության, վերջիններիս կողմից որդեգրված երեխային՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու թույլտվության տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 269-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

«ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող երեխաների խնամքի կազմակերպումը խնամատար ընտանիքներում: Հիմնադրամի կողմից արդեն իսկ ընտրվել են մարզերի բնակիչ քաղաքացիներ, ովքեր պատրաստ են խնամատարության միջոցով իրականացնել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող այնպիսի երեխաների խնամքը, որոնց խնամքն ու դաստիարակությունը հնարավոր չէ իրականացնել կենսաբանական ընտանիքում: Խնամատար ծնող է գրանցվել 12 թեկնածու, որոնք անցել են խնամատարության թեմայով դասընթացներ և սոցիալական դեպք վարողների հետ համատեղ իրականացված գնահատման հիման վրա ստացել դրական եզրակացություններ: Երեխա է ընտրել 7 ընտանիք: Տարվա ընթացքում խնամվածների միջին թիվը կազմել է 35՝ պայմանավորված չափահաս շահառուների ծրագրից դուրս գալու հանգամանքով: Ոլորտում իրականացվող բարեփոխումների քաղաքականությամբ պայմանավորված՝ խնամատար ընտանիքներում կազմակերպվում է նաև հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքը:

Նախարարության համակարգում գործող երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատությունում (մանկատներում) իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 590 երեխա՝ նախատեսված 649 երեխայի փոխարեն) երեխայի շուրջօրյա խնամքը, այդ թվում՝ շուրջ 450 երեխայի խնամքը՝ երեք հատուկ (մասնագիտացված) հաստատությունում՝ պայմանավորված հաստատությունների բեռնաթափման քաղաքականության արդյունքում երեխաների կենսաբանական ընտանիք վերադառնալու, որդեգրման և խնամատար ընտանիքներ տեղավորելու հանգամանքով:

Թեև ընդհանուր տիպի հաստատություններում բեռնաթափման և հաստատություններ մուտքի կանխարգելման գործընթացով պայմանավորված շարունակում է նվազել խնամվող երեխաների թիվը, սակայն հատուկ (մասնագիտացված) հաստատություններում նախատեսված թիվը ավելանում կամ մնում է անփոփոխ՝ պայմանավորված բուժհաստատություններից առողջական խնդիրներով նորածինների շարունակական ուղեգրմամբ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների կենսաբանական ընտանիքներ վերադառնալու, որդեգրվելու կամ խնամատար ընտանիք տեղավորվելու գրեթե անհնարիությամբ:

«Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ» միջոցառման շրջանակում երեխաների խնամքի գիշերօթիկ չորս հաստատությունում 2018 թ. նախատեսվել է սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ 621 երեխայի շուրջօրյա խնամք, սակայն հաստատություններում փաստացի խնամվել է միջինը 375 երեխա՝ պայմանավորված երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների վերակազմակերպման գործընթացով՝ մասնավորապես «Կապանի երեխաների խնամքի և

պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» և «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ների վերակազմակերպմամբ: Շուրջօրյա խնամք ստացող երեխաները վերադարձել են կենսաբանական ընտանիքներ և միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ այդ ընտանիքներին իրենց գնահատված կարիքներին համապատասխան տրամադրվել է աջակցություն:

Նախարարության համակարգի՝ երեխաների սոցիալական հոգաձության ցերեկային 3 կենտրոնի կողմից ծառայություններ են տրամադրվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 6-18 տարեկան շուրջ 250 երեխայի և նրանց ընտանիքներին, երեխայի և ընտանիքի աջակցության երեք կենտրոնը ծառայություններ է տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան շուրջ 150 երեխայի:

«Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության՝ երեխաների 4 ցերեկային կենտրոնում (Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ) ծառայություններ են մատուցվել դժվարին իրավիճակում հայտնված առնվազն 250 երեխայի:

«Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան շուրջ 17 երեխայի տրամադրել է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք:

«Հաշմանդամ երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների մատուցում Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 ներառական մանկապարտեզում» նախարարության համաֆինանսավորմամբ միջոցառման շրջանակում Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 ներառական մանկապարտեզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում մտավոր և ֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող միջինը 20 երեխայի մատուցվել են բազմամասնագիտական ծառայություններ:

«Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում (մանկատներում) խնամվող դպրոցահասակ երեխաներին դրամական աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակում 7-18 տարեկան երեխաներին տրվում է մանր ծախսերի համար նախատեսված գումար /գրպանի գումար/: Գումարը տրամադրվել է փաստացի դպրոց հաճախող 103 երեխայի:

Հաստատություններից երեխաներին կենսաբանական ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում և կանխարգելում) միջոցառման շրջանակում ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում գործող միջոցառման շրջանակում կենսաբանական ընտանիք է վերադարձել 10 երեխա, կանխարգելվել է 110 երեխայի մուտքը հաստատություններ: Միջոցառման շրջանակում շուրջօրյա հաստատություններից կենսաբանական ընտանիքներ վերադարձած և այդ հաստատություններ մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքներին տրամադրվել է բնաիրային օգնության փաթեթ՝ սննդի զամբյուղ, հագուստ և կոշիկ, գրենական պիտույքներ և դասագրքեր, էներգետիկ ծառայությունների փոխհատուցում:

«Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագրի շրջանակներում «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի 9 շրջանավարտի տրամադրվել է միանվագ դրամական օգնություն՝ 50.000 դրամի չափով:

Ժողովրդագրություն

2018թ. ընթացքում մշակվել և ընդունվել է՝

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» 06.03.2018թ. N 249-Ն որոշումը,

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 14.09.2018թ. N 1006-Ն որոշումը,

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի 275-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 01.11.2018թ. N 1220-Ն որոշումը:

Իրականացված օրենսդրական փոփոխությունների և «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի կատարելագործման արդյունքում 2018թ-ից ապահովվել է.

- 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստ, խնամքի նպաստ, թաղման նպաստ նշանակելու դիմումն առցանց ներկայացնելը.

- ՔԿԱԳ-ի մարմինների հետ ծննդյան ակտերի և ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ տեղեկատվության փոխանակության համակարգի ներդրումը և դրա կիրառմամբ ՔԿԱԳ տեղեկատվական համակարգին էլեկտրոնային հարցում կատարելը, անհրաժեշտ տվյալներ ստանալը, այդ տվյալները «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառելը և դրանց հիման վրա որոշումներ կայացնելը (երեխայի ծննդյան միանվագ և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի, ինչպես նաև թաղման նպաստ նշանակելը կամ մերժելը):

Սոցիալական աջակցություն

Պետական նպաստները 2018 թվականին նշանակվել և վճարվել են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-154-Ն) սահմանված դրույթներին համապատասխան՝ որպես «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-231-Ն) 8-րդ հոդվածով նախատեսված սոցիալական ծառայությունների առանձին ձև: Պետական նպաստների նշանակման և վճարման կարգերն ու առանձնահատկությունները, ինչպես նաև չափը սահմանում է ՀՀ կառավարությունը: Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ, հրատապ օգնություն) նշանակման և վճարման գործընթացը 2018 թվականին իրականացրել են սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները կամ բաժինները (այսուհետ՝ ՍԱՏՄ), որոնք պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի առանձնացված ստորաբաժանում են:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ.

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (նախկինում ընտանեկան նպաստ) ծրագիրը կոչված է աջակցելու աղքատ ընտանիքներին, ունի սոցիալական բարձր հնչեղություն:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագրի հասցեականության մեծացման հարցը մշտապես դիտարկվել է որպես սոցիալական աջակցության ոլորտի մարտահրավեր, և դրան հասնելու նպատակով իրականացվող միջոցառումները հիմնականում իրականացվել են 4 ուղղությամբ՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություն, վարչարարության բարելավում, տարածքային մարմինների աշխատողների վերապատրաստում և բնակչության իրազեկում:

Ընտանեկան նպաստի համակարգում բարեփոխումներն իրականացվել են հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի սահմանած ուղղություններին, ՀՀ ԱՎԾ ամենամյա տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների տվյալներին համապատասխան՝ փոփոխելով ընտանիքների անապահովության գնահատման կարգը:

Ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունքը որոշվում է ընտանիքի անապահովության միավորով, որը որոշվում է ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ հաստատված ընտանիքների անապահովության գնահատման կարգով: Համաձայն այդ կարգի ընտանիքի (տնային տնտեսության) անապահովության աստիճանը գնահատելու նպատակով հաշվի են առնվում աղքատությունը բնութագրող անուղղակի ցուցանիշներ՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը, ընտանիքում անաշխատունակ անդամների թիվը, բնակավայրը, ընտանիքի բնակարանային պայմանները, ընտանիքի միջին ամսական եկամուտը և այլն:

Վերոհիշյալ յուրաքանչյուր ցուցանիշ ունի իր թվային արժեքը, որոնց արտադրյալով որոշվում է ընտանիքի անապահովության միավորը: Որքան մեծ է այդ միավորը, այնքան անապահով է համարվում այդ ընտանիքը:

2008 թվականի հունվարի 1-ից ընտանեկան նպաստի իրավունքի ճանաչման սահմանային միավորը սահմանվեց «30.00», նախորդ տարվա «33.00» անապահովության միավորի դիմաց: Այս մեծությունը պահպանվել է նույնությամբ մինչև 2018 թվականը ներառյալ:

Ընտանեկան նպաստների բնագավառում հիմնական փոփոխությունները կատարվել են 2012 թվականին՝ ընտանիքի միջին ամսական եկամտի կառուցվածքում, եկամտի գործակցի հաշվարկման բանաձևում: 2017 թվականին ներդրվել է ընտանիքի յուրաքանչյուր աշխատունակ անդամի աշխատանքի շուկայում դրսևորած վարքագծի գնահատումը՝ նպաստակ ունենալով զբաղվածության ապահովման և պետական սոցիալական աջակցության ծրագրերը հատկապես բնակչության անաշխատունակ շերտերին (երեխաներին, միայնակ տարեցներին, բազմազավակ ընտանիքներին և այլ խմբերին) ուղղելու սկզբունքային մոտեցումը, 2018 թվականին՝ ընտանիքների անապահովության գնահատման ժամանակ ընտանիքի չափահաս անդամների տվյալ պահին առկա վարկային պարտավորությունների և ժամկետանց վարկերի մասին ԱԲՌԱ վարկային բյուրոյից ստացված տեղեկանքներում ներառված, ինչպես նաև բանկային ավանդների և դրանցից ստացված եկամուտների մասին տվյալների ստացումը՝ հետագայում դրանք որպես բնութագրիչ կիրառելու վերաբերյալ նպատակահարմարության հարցը քննարկելու համար:

Պետական նպաստների նշանակման և վճարման գործընթացի վարչարարության բարելավմանն ուղղված փոփոխությունները վերաբերում են նախ և առաջ այն հանգամանքին, որ ավելացել են այն տվյալների թիվը, որոնք որևէ պետական նպաստի իրավունքի իրացման համար ընդունվում են դիմողի հայտարարությամբ, իսկ դրանց հավաստիությունը ստուգվում է առցանց եղանակով ձեռք բերված տվյալով:

Մասնավորապես, հարկ է նշել, որ առցանց եղանակով տվյալներ են ստացվում ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրի տեղական ստորաբաժանումներից (բնակչության կամ ընտանիքի կազմի մասին տվյալը), ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից (ընտանիքի ունեցած հողատարածքի մակերեսի, տեսակի և դրա կադաստրային գուտ եկամտի մասին տվյալները): Նշված երկու տվյալն օգտագործվում է անմիջականորեն ՄԱՍՄ-ների կողմից՝ իրենց առցանց հարցմանը տրված պատասխանի ձևով: Առցանց են ստացվում նաև տվյալներ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից, ՀՀ ԿԱ ոստիկանության ՀՀ ճանապարհային ոստիկանությունից, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություններից՝ ամսական պարբերականությամբ «Նորք» ՄՕՏԻԿ հիմնադրամի կողմից, ուր իրականացվում են տարբեր տեղեկատվական բազաների տվյալների կենտրոնացված համադրումներ. դրանց արդյունքներով ձևավորված ցուցակները տրամադրվում են ՄԱՍՄ-ներին, որոնք աշխատում են այդ ընտանիքների հետ՝ կրկին ուսումնասիրում նրանց սոցիալ-տնտեսական պայմաններն ու առաջարկություն ներկայացնում ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունքի կապակցությամբ:

Այս ուղղությամբ արված փոփոխություններն իրենց արտահայտությունն են գտել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների, նաև ընտանեկան նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թվի հարաբերակցություններում: Այսպես, ստորև ներկայացվում է փոփոխությունների դինամիկան.

Աղյուսակ 1. Ընտանեկան (կամ սոցիալական) նպաստը ՀՀ-ում 2013-2018թթ.

	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Հաշվառված ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	16.5	17.2	17.4	17.41	15.28	14.4
Նպաստառու ընտանիքներ (% հաշվառված ընտանիքների թվից)	79.78	77.71	77.57	80.8	83	84.1
Նպաստառու ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	13.16	13.37	13.53	14	12.7	12.1
Երեխա ունեցող ընտանիքներ (%նպաստառու ընտանիքներից)	76.97	76.27	76.91	75.5	75.2	73.1
ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ (մլրդ)	37.105	37.105	38.361	38.361	39.498	39.498
Նպաստառու ընտանիքների թիվ	102570	104130	105408	106296	103723	97232
Նպաստի միջին չափ (դրամ)	29350	30350	30350	31350	31350	31350

2018թ.- ին նույնպես շարունակվել է նախատեսված ֆինանսական միջոցների ուղղումն առավել աղքատ ընտանիքներին, առավելապես երեխա ունեցող ընտանիքներին, մասնավորապես բազմազավակ ընտանիքներին, հաշվի առնելով նաև ընտանիքի բնակության վայրը՝ բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրեր:

Ընտանեկան նպաստի չափը որոշվում է նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի մինչև 18 տարեկան յուրաքանչյուր անդամի (երեխայի) համար տրվող հավելումը, որի չափը տարբերակվում է ելնելով տվյալ ընտանիքի անապահովության միավորից, ընտանիքի բնակության վայրից, ինչպես նաև ընտանիքում երեխաների թվից:

Սոցիալական, ընտանեկան նպաստների ինչպես նաև եռամսյակային հրատապ օգնության բազային մասը 2018 թվականի համար սահմանվել է 18000 դրամ:

Ըստ անապահովության միավորի՝ հավելման չափերը տարբերակվում են երեք մակարդակով՝ առաջինը՝ 30.01-35.00 անապահովության միավորների տիրույթ, երկրորդ մակարդակը՝ 35.01-39.00, և երրորդը՝ 39.01 և ավելի: Այս տիրույթներում հավելման չափերը միմյանցից տարբերվում են 500 դրամով՝ որքան բարձր է անապահովության միավորը, այնքան բարձր է հավելման չափը:

Անապահովության միավորների յուրաքանչյուր տիրույթում հավելման չափը նույնպես տարբերակվում է, սահմանամերձ, ինչպես նաև բարձր լեռնային բնակավայրերում բնակվող ընտանիքի երեխայի համար տրվող հավելումը 500 դրամով ավելի է տվյալ տիրույթի համար սահմանված հավելման չափից, իսկ եթե ընտանիքում երեխաների թիվը 4 և ավելի է, ապա նրանցից յուրաքանչյուրի համար տրվող հավելման չափը բարձր է ևս 1 000 դրամով:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում սահմանվել են միանվագ հրատապ օգնության նշանակման հստակ հիմքեր՝ ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան, երեխայի առաջին դասարան ընդունվելու և ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ունեցող ընտանիքի անդամի (եթե կենսաթոշակառու, ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունեցող չէ) մահվան դեպքում՝ հուղարկավորության:

Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնության չափը սահմանվել է 50 հազար դրամ, երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնության չափը՝ 25 հազար դրամ, իսկ ընտանիքի անդամի մահվան դեպքում՝

հուղարկավորության միանվագ հրատապ օգնության չափը՝ 50 հազար դրամ: 2018թ. ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ հրատապ օգնություն է տրվել երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 3 891 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 9 395 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 119 ընտանիքի:

Համակարգում հաշվառված, սակայն ընտանեկան նպաստի իրավունք չունեցող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի կարճատև ֆինանսական խնդիրները լուծելու նպատակով՝ ՄԱՏՄ-ն սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ կարող է տվյալ ընտանիքին նշանակել հրատապ օգնություն՝ եռամսյակով: Հրատապ օգնություն նշանակելու հարցը կարող է քննարկվել յուրաքանչյուր եռամսյակ և ընդունվել որոշում հրատապ օգնությունը նշանակելու կամ մերժելու մասին: Հրատապ օգնության չափը սահմանվում է բազային նպաստի չափին հավասար: 2018թ. հրատապ օգնություն են ստացել միջինում 5 152 ընտանիք:

Միաժամանակ կարևորվում է սոցիալական ծառայությունները փաթեթով տրամադրելու խնդիրը: **Ինտեգրված սոցիալական ծառայությունների** տրամադրումը միջոց է սոցիալական ծառայությունների որակը, մատչելիությունը բարձրացնելու, դեպի հաճախորդները կողմնորոշելու, դրանց գնահատման և մշտադիտարկման, ինչպես նաև ամբողջ գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Նշված համակարգին անցնելու գործընթացը բավականին երկարատև է, այն պետք է իրականացվի ասիճանաբար և առնչվում է կառավարման ոլորտի տարբեր ճյուղերի: Համակարգի ներդրման համար իրականացվում է իրավաստեղծ ծավալուն աշխատանք, հստակեցվում են յուրաքանչյուր օղակի լիազորությունների շրջանակները, ինչպես նաև համատեղ աշխատանքի եզրերը, մշակվում են մեխանիզմները, դրանց նորմացույցերը և այլն:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման նպատակով 2012 թվականի հուլիսի 26-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 952-Ն որոշումը, որով հաստատվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի (այսուհետ՝ համակարգ) ներդրման ծրագիրը, նախատեսվել և ՀՀ Արարատի մարզում իրականացվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագիր:

Համակարգի ներդրումը ենթադրում է հանրապետությունում ձևավորել համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ (ՀՄՕՏԿ), որոնցում տեղակայվելու են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության սոցիալական ապահովության ապահովության բաժինները, զբաղվածության տարածքային (մարզային) կենտրոնները, բժշկասոցիալական փորձաքաննական հանձնաժողովները, ՀՀ մարզպետարանների (Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների) սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները: 2018թ. դրությամբ գործում են թվով 22 ՀՄՕՏԿ-ներ:

Ընտանիքների անապահովության գնահատման համակարգի հիման վրա տրամադրվել են նաև այլ ծառայություններ: ՀՀ Կառավարության 03.11.2016թ.-ի N1122-Ն որոշմամբ սահմանված կարգով 2018 թվականի ընթացքում էլեկտրական էներգիայի համար նվազ սակագներով վճարման իրավունքից օգտվել է 104.585 ընտանիք՝ սպառած էլեկտրաէներգիայի չափաքանակները 195.975.512 կվտ.ժ, իսկ բնական գազի սպառման համար 83.107 բնակիչ-բաժանորդ՝ սպառած բնական գազի չափաքանակները 33.445.301 խոր.մ.:

Ընտանիքներ անապահովության գնահատման համակարգում հաշվառված 30.00 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների անդամները օգտվում են նաև մասնագիտական կրթության վարձավճարի մասնակի փոխհատուցման ծրագրից (համաձայն ՀՀ կառավարության 27.07.2006թ. N 1183-Ն որոշման) և պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում անվճար սպասարկում և ծառայություններ ստանալու իրավունքից (համաձայն ՀՀ կառավարության 04.03.2004թ. N318-Ն որոշման):

Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2019

Վիճակագրական ծողովածու

ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, ՀՀ
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ

☎ (37411) 523 927

☎ (37411) 524 618

ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԵՆ՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի տնային
տնտեսությունների վիճակագրության բաժին

☎ (374 11) 524 326

Դիանա Մարտիրոսովա

ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական

☎ (+374 11) 560 349

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական
տեղեկատվության տարածման բաժին

☎ (374 11) 523 356

*«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2020» վիճակագրական ծողովածուն նախատեսված է
հրատարակել 2020 թվականի IV եռամսյակում:*